



Արիստոտել, մ. թ. ա. 384–322 թթ.

ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՖԻԶԻԿԱՆ

Արիստոտելն առաջինն էր, ով փիլիսոփայությունից առանձնացրեց գիտության առանձին ճյուղեր: Նա է գիտության մեջ ներմուծել «ֆիզիկա» տերմինը: Ըստ Արիստոտելի՝ ֆիզիկան պետք է ուսումնասիրի բնության հիմնական օրինաչափությունները, սկզբունքները և տարրերը:

Ֆիզիկայի բնագավառում Արիստոտելի աշխատությունները չափազանց ընդգրկուն են. տարրերի տեսություն, շարժում, տիեզերքի կառուցվածք: Նա իր գաղափարները շարադրել է «Ֆիզիկա» կոչվող աշխատության մեջ:

Արիստոտելյան «Ֆիզիկայում», ի տարբերություն ֆիզիկայի ժամանակակից դասագրքերի, մենք չենք գտնում ո՛չ մաթեմատիկական բանաձևեր, ո՛չ էլ սարքերի և փորձերի նկարագրություններ:

Արիստոտելը եզրակացության է հանգում դատողությունների, այս կամ այն ենթադրությունների տրամաբանական հակասությունների բացահայտման օգնությամբ: Նա գտնում է, որ գիտափորձը խախտում է բնության իրական կյանքը և աղավաղում է ճանաչողության գործընթացը:

Ըստ Արիստոտելի՝ Երկրի վրա բոլոր մարմիններին յուրահատուկ է ծանրությունն ու թեթևությունը, դրանց մի մասը ձգտում է դեպի Երկրի կենտրոնը, իսկ մյուսները՝ դեպի վեր: Օրինակ՝ նրա կարծիքով կրակին և օդին բնորոշ է դեպի վեր ձգտումը, իսկ ջրին և հողին՝ դեպի ներքև ձգտումը: Դա նրանց բնական շարժումն է: Երկնային մարմիններին հատուկ է հավասարաչափ շրջանագծային շարժումը: Մնացած բոլոր շարժումները տեղի են ունենում արտաքին ուժերի ազդեցությամբ:

Նշենք, որ Արիստոտելի ստեղծագործությունները ժամանակին տարածվել են Հայաստանում և մեծապես ազդել հայ միջնադարյան փիլիսոփայության և հոգևոր մշակույթի վրա: Արիստոտելի երկերի հայերեն թարգմանությունները հնագույններից են աշխարհում: Դավիթ Անհաղթը (V–VI դարեր) հատուկ աշխատություններ է նվիրել Արիստոտելի գործերին, մեկնաբանել նրա ուսմունքը: